

որպէս զի ուրիշները բոյնին փնաս մը չտան : ()տար թռչուններու սաստիկ թռչումի են , և չեն ուզեր որ իրենց բոյնին մօտիկնան ուրիշները :

Բաղքի մը քով երկու անտառ կար կ'ըսէ մէկը , մէկուն մէջ ձկնկուլները՝ կը բնակէին՝ մէկալին մէջ ագռաւները , ու մէկմէկու ամենեւին վընաս չէին տար : Պէտք եղաւ որ ձկնկուլներուն բնակած անտառին ծառերը կտրեն . աս պատճառաւ անոնց ձագերէն շատը մեռան , իրենք ալ ուզեցին երթալ ագռաւներուն անտառը բոյն չինել : Բագռաւները թող չըտուին . ձկնկուլները կուզէին մտնել . երկու կողմէն շատ մը ջարդուէլէն ետքը՝ ձկնկուլները մէկ երկու ծառի վրայ հազիւ կրցան բոյն չինել : Հետեւ տարին նորէն կռիւ բացուեցաւ . վերջապէս ձկնկուլները յաղթելով , անտառին կէսը ասոնց եղաւ , կէսը ագռաւներուն . ասանկով խաղաղացան :

Շատ ագռաւներ անտառի մը մէջ կը կենային , կ'ըսէ ուրիշ մը . օր մը իրիկուան դէմ գնացի որ տեսնեմ թէ ասոնք ինչ կ'ընեն : Ելեցին ծոյլերը կամ պղտիկները անդադար կը ցատքըտէին , կը թռչըտէին , կը ծեծկուէին մէկմէկու հետ , ու կը պուռային կը պողլտային ուրախութիւն : Եսոնց մէջէն մէկը կատաղաբար խաժաւ ուրիշի մը թեւը . ան խեղճը ցաւէն չկրնալով թռչիլ՝ ընկաւ գետը , ու սկսաւ խեղճ կերպով լալ ու կանչել . մէկէն ամէնքը իրենց ընկերոջը օգնութիւն հասան , սկսան ցաւ ցուցընել վրան , ու ելլելու կերպ մը սորվեցընել . ան ալ աշխատելով ելաւ , թռաւ քիչ մը , ու հասաւ բարակ ծառի ճիւղի մը վրայ . աս տեսնելուն պէս ընկերները սկսան ուրախանալ : Բայց քիչ մը ատենէն բոյնը երթալ ուղեւորներէն ընկաւ գետը խղճուեցաւ , ու ընկերներուն ուրախութիւնը տրտմութիւն փոխուեցաւ :

Ես տեսակը շատ կայ Բնագլիա . Ժո-

1 ՊԵՆԷԼԻ :

ղովուրդն ալ ասոնց ամենեւին փնաս չընեն , որովհետեւ ճախները ու փնասակար կենդանիները կը ջարդեն :

Եկարէն ագռաւը աւելի Եւրոպա կը գտնուի , բայց ոմանք կ'ըսեն թէ հիւսիսային Եւրոպա ալ կայ : Շատ կը սիրէ ընկերական վիճակը , անչափ որ ուրիշ տեսակ ագռաւներու հետ ալ ընկերութիւն կ'ընէ : Երեն կերակրոյն ու ընտանեկան բնութեամբը շատ նման է հասարակ ագռաւին . երկայնութիւնը մէկ ոտնաչափ է , և վրան գոյն զգոյն բծեր ունի :

Ետարակաբնակ ագռաւ : Եսիկայ Եսիա ու Եւրոպա կը գտնուի , ու բոյնը պատերու , աշտարակներու , զանգակատուններու , երբեմն նաեւ ճապարի բոյներուն մէջ կը չինէ . ձայնը թէպէտ շատ զօրաւոր չէ , բայց սաստիկ սուր է : Եւրոպա կ'ընտանենայ , և աղէկ ընկերութիւն կ'ընէ շան , կատուի և ուրիշ ընտանի թռչուններու հետ . բաւեր կը սորվի , և թէ որ իրեն անունը սորվեցընես՝ կանչելուդ պէս մէկէն կուգայ . երկայնութիւնը 13 բթաչափ է :

Եսոր այլ և այլ գոյներով ալ կը գտնուի , ինչպէս բոլորովին ճերմակ՝ դեղին կտուցով , կամ միայն գլուխը ճերմակ , ոմանց ալ թեւերը ճերմակ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱԿԱՌԻԹԻՒՆ

(Ժ) Դրչափ Կարբերութիւն կ'ընէ ընդանեայ Բնաւորութեանը վրայ՝ Ժառանգութեան օրինակը :

Ես մարդիկն որ մասնաւոր ջանք ունին ժողովրդեան բարոյականը շտկելու , աղէկ պիտի դիտեն ծառայից աղէկութիւնն ու գէշութիւնը . վասն զի շատ անգամ տղոց դաստիարակութեան մեծ մասը ան ծառաներուն ձեռքը յանձնուած է՝ նաեւ ան տնէրուն մէջ ալ որ ծնողք մեծ հոգ ունին իրենց տղոցը կը թուրթեանը վրայ :

Տղան քանի որ պզտիկ է՝ իրեն ժա-
մանակին մեծ մասը ան մարդուն հետ
կ'անցընէ՝ որ իր վրայ խնամածու
դրուած է : Բայց քիչ մը մեծնալէն
ետքն ալ կարծես թէ կը սիրէ ծա-
ռայից ու աղախնայց հետ ընտանու-
թիւն ու բարեկամութիւն ընել, ա-
նոնց անհամու փաստակար պատմու-
թիւնները մտիկ ընել, ու անոնց հետ
անխելք կատակներ ընել : Արանի ան
մարդուն որ աղէկ ծառաներու հան-
դիպած է, որ չաւրեն տղաքը, հապա
ջանան տղոց՝ ի բարին առաջնորդել.
ընդհակառակն վայ անոր որ գէշ ծա-
ռայի չար օրինակներովը՝ իր տղոցը
բարքը կ'ապականէ :

Յայտնի բան է որ տղաք բան մը
տեսածնուն պէս՝ թէ աղէկ և թէ
գէշ՝ մէկէն կը հետեւին . ամէն բանի
դիւրաւ կը հաւատան, մանաւանդ
ան բաներուն որ իրենց ախորժակին
յարմար է : Առաջից չափազանց
ընտանութիւնը աւելի ալ փաստակար
կ'ըլլայ՝ երբոր տղոց բանականութիւ-
նը բացուած ու մանկական աշխու-
ժութիւնը արթնցած է . որով ծառա-
ներուն հետ շատ անգամ կը միաբա-
նին՝ նաև ընդգէմ ծնողաց կամացը :

Առաջից հաւատարմութենէն ու
խղճմտանքաւոր ըլլալէն շատ տղաք
ալ խնայող կ'ըլլան : Առաջ մը կըր-
նայ երկար ատեն իր անհաւատար-
մութեանը մէջ կենալ՝ առանց տէրե-
րուն իմանալուն . և սակայն տղաքը
թէ որ աւերուին՝ պատճառը ան ծառա-
ներուն բնաւորութիւնն է :

Բնի ատենները տէրերը ծառա-
ներուն ան աչքով կը նայէին՝ իբր թէ
անոնք ալ իրենց տղոցը կարգն ըլ-
լային . ոչ միայն կը նայէին որ պարզ
իրենց ծառայական պարտքերը կա-
տարեն անոնք, հապա նաև հոգ ու-
նէին որ իրենց քրիստոնէական պարտ-
քերը կատարեն . երբոր յանցանք մը
ընէին՝ կը խրատէին զիրենք, շատ ան-
գամ նաև կը պատժէին ու կը յանդի-
մանէին . աս իրենց ըրած խստութիւնը
շատ կ'օգնէին ան ատենի օրէնքներն

ու սովորութիւնները : Բն ծառայից
վրայ զգուշութիւն ընելու պատճա-
ռաւ՝ տէրերնին աւելի խղճմտանքա-
ւոր կ'ըլլային զիրենք ծառայութենէ
հանելու ատեն, ու դիւրաւ բարի
վկայութեան գիր չէին տար անոնց
ձեռքը : Բն հակառակն հիմա շատ
անգամ անփոյթ կ'ըլլան, ու բարի
վկայականը կուտան նաև ան մարդիկ
ներուն որ անհաւատարիմ ճանչցուե-
րեն, ու բարոյականնին աւերուած է :
Այսին զի Աւրոպայի մէջ սովորութիւն
մը կայ, որ ամէն քաղաք տէրութեան
պաշտօնատէրները տեսորակ ունին՝
մէջը բոլոր ծառայից անունը գրուած .
ուրիշ տեսորակ մըն ալ ծառաներուն
տուած են . երբոր տեղ մը ծառայու-
թեան կը մտնէ մէկը, տեսորակը իր
տիրոջը ձեռքը կուտայ . թէ որ տէրը
հանել ուզէ իր ծառան՝ պատճառը
ան տեսորակին մէջ կը գրէ, թէ որ ա-
ղէկ է՝ գովեստ, իսկ թէ գէշ՝ պարսաւ :

Վաղղիայի խռովութեան ատենը,
այսինքն 1793ին, ծառայական վիճա-
կը վերցուեցաւ անկէ, որպէս զի ա-
նով իբր թէ ամէն մարդ ազատ ըլլայ,
ու տէրերը շատ բռնութիւն չընեն
ծառաներուն . ուստի տէրերը անկէ
ետքը իրենց ծառաներուն բարքը և
կրօնքը ամենևին պիտի չնայէին, հա-
պա միայն անոնց ծառայութեանը
նայելով՝ ըստ այնմ պիտի վարձա-
տրէին : Բայց աս բանիս ալ մեծամեծ
փաստները շուտով տեսան Վաղղիա-
ցիք, ու քիչ ատենէն սկսան նորէն
առջի բարեկարգութեան ետեւէն ըլ-
լալ :

Վերամանիա և ուրիշ տեղեր հիմա
մասնաւոր օրէնքներ ալ կան ծառայից
վրայ, որ ուրիշ անգամ զատ յօդուա-
ծով կը դնենք :